

ներուղ կեանքն ու դիրքն ընտանեաց մէջ և ընկերութեան հանդէպ, անոնց տրուած սկզբունքներն և ուսումը: Ահա ինչ որ զիտենք այդ մասին:

Ալբայրդին, — ինչպէս կը կարգանց Պապի համար, — անտարակոյս և իշխանորդին, հայրենի դղեկին կամ ապարանից մէջ առանձին տուն կամ յարկարաժին մ'է բռնած զաստիարակին հետ, ուր կը բնակի և կը ննջէ յատուկ սենեկի մը մէջ՝ ոտնաւոր զահոյից վրայ: Ունի սենեկապահ մը, որ կը սպասէ ուղարկի պատանւոյն հրամանաց, անոր սրտակիցն ու գաղտնի կամ յայտնի գործակիցն է, և անոր ընկերները կամ ախործած անձինքը կը մուծանէ անոր քով. և երբեմն վրիպելով զաստիարակին ուշադրութենէն, պատանւոյն բարյական քայլայման օժանակ կը դառնայ:

Մայրը, որ ըսկնց թէ կը հսկէր զաւակին վրայ, ընակութեան այդ անշատաման պատճառառ երբեմն ի լրոյ միայն կ'իմանայ անոր գործերը, և սոսկ չափով մը կինայ հրամայել այդ ապագայ արքային կամ նախարարին: Այսինքն որքան նա հաճի լսել իրեն, և կամ ինք կը յաշողի ենթարկել զայն իր մայրենի իշխանութեան: Այսպէս Պապ, որ իր ընկերաց հետ զեղծութեր կը գործէ սենեկին մէջ՝ մասնակցութեամբ սենեկապանին, կը դիմադրէ Փառանձեմի, որ ուրիշներէ «զգալով» զաւակին ընթացքը, ներս կը մտնէ խափանելու համար, և նա ճշելով ու վայելով՝ կը ստիպէ մայրը մեկնի, որ կ'ենէ՝ աւաղելով ինք զինքը¹: Յատուի է հոռ այդ պատանւոյն չափով մ'անկախութիւնը մօրմէն: Բայց ուրիշ տիկին մայրեր, որոնց քան զՓառանձեմ բարոյապէս զօրաւորագոյն հոգոյ վիճակած էին, զիտացն իրենց ձեռաց մէջ առնուլ զաւակաց սիրու, և ճեկ զայն բարյականի կաղապարին մէջ, պատրա-

տելով քրիստոնեայ և առաքինի որդիներ, ինչպէս տեսանք², անտարակոյս պատիժներ ալ ի գործ զնելով անոնց վրայ՝ երբ պէտք լինէր, բայց միշտ ինայելով³:

Բոլոր իշխանորդից ունին նաև իրենց ծառաները, որոնք գաստիարակաց հետ կ'ընկերեն իրենց՝ որսորդութեան և ուրիշ մարզական զրոսանաց մէջ, օգնելով անոնց և կրելով անոնց կրինոցները, ինչպէս մանր պիտի տեսնենց աշխատութեան երկրորդ մասին մէջ:

Հ. Վ. ՀԱՅՐԵՆԻ

(Ծարումակելի)

ԼԵԶՈՒԱԳԻՏՑԱԿԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲՈԱՌԵՐ

ՀԱՅԱՔԱՐԱԽՆԻ ՄԵԶ

ԱՅՈՒԱՅՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԱԴՐԱՄԱՐԱՑ

(Պա. Եղմիածին 1916)

ՆԱՅՈԹ. — Այս աշխատութիւնը՝ որ նաւագար Ղազարի ընդօրինակութիւնն է (1824 թուն), խմբազրուած է երկու անկախ զրութիւններէ: առաջինը Գագիկ Արծրունի թագաւորի քարտուղար թովմայի գործն է, երկրորդը տիրացու ներսէի (ԺԲ դար): Դժրախտարար հրատարակիչը (Մեսրոպ Վրդ: Մաքրուտեանց) կարեոր չէ համարած զրբին սկիզբ զնել փոքրիկ ուսումնասիրութիւն մը, ուր պատմուած չէպահեռու, զրութեան ոճի և իզուի ցնութեամբ պարզուէր երեց զրիշներու հեղինակութեան բաժինը: թէ ովէ թովմայ քարտուղարը, արդեօց մեզի ծանօթ թովմա Արծրունի պատմիչը չէ: թէ իրօք Ղազարը հասարակ ընդօրինակոնդ մըն է, ինչպէս ինքը կը խոստովանի (էջ 84, տող 27-28) թէ խմբազրու մը եղած է (Հմիտ: Գարը զետնետեալ բառին տակ թովմայէն ընդօրինակուած ամրող հատուած մը): և կամ ո՛ր մասերն են յատ-

1. Փառ. 155-6. — 2. Առաջ. 51-53. — 3. Հմիտ. առաջ. 85:

կապէս որ կը պատկանին թուվմայի, այսինքն հնագոյնն են և որոնք ներսէսինն են, այսինքն կը պատկանին շատ յետին ժամանակներու Հ. Մաքսուտեանը՝ որ այնպէս նախանձախնդիր էր մեր հին զրականութեան մէջ ժողովրդական բարրափի հետքերը որոնելու, աւելի ուշադիր ըլլալու էր այս կէտին, որով միայն կարելի պիտի ըլլար որոշել թէ նկատուած բարրափին ձևերը հին են և ո՞րքան հին են, թէ բոլորովին նոր բաներ են, այսինքն 1824 թուէն։ Այս անորոշ վիճակին մէջ մենք ալ կը քաղենց ուրեմն գրուածքին մէջ պատահած նոր բաները, առանց կարենալու որոշել թէ անոնցմէ որոնք հին լիքուին յատուկ և որոնց նոր զաւառական բառեր են։

Այրայինակ «Թագավառորական»։ Ի տեսանել նորա հեռաստանէ զգունդն հայրապետին, իսկոյն ի վայր իջեալ արքայեակ կառէն՝ հետիոտ քայլէր (Էջ 80)։ — Իմաստին համար բառին — եսկ մասնիկը անյարմար է, ուստի կը կարծեմ որ պէտք է սրբազնել արքային, ինչպէս կը գտնենք արդէն այս իմաստով գործածուած ձառընու։ «Արքայինան տիկին» (արքայական տիկին)։

Բրարկին «մահակ, կոպաւլ»։ Երեց տուն մալի ու խազին (=արար, մալ ո չա-
զունա ապրանց և զանձ), 4 տուն հա-
զեստի էր, գէմին ու զրեն, թուր (,) բլաթ-
կին և նաշախի ու ուռմբ և ասպարա անհոն
բազմութեամբ (Էջ 20)։ — Նոյն բառը կը
գտնենք նաև քանի մը ուրիշ տեղեր
գործածուած, այսպէս՝ Ընջուղուն զէր և
ազուոր պիտի, որ միս ունենայ և ուժով
կտրին զահեն և բերեն ծանր պատկերով
և ծեծն ի տունն. և ընդ առաջն մեղմն
ծեծն զընջուղուն և ի հետ սերտեն զզար-
կերն այնչափ, որ միսն մէն մանրի և ի
զարկուցն մեռանի (Վատկ. Էջ 194)։ — Ու
տեսան ազգի ազգի սլեն կապած, ըռումք
և շարխի աղեղ լարած ու թբեր և բատկի
ասպարը ու քէշիկ (Պղնձէ քաղաք, Տփիլս
1908, Էջ 39)։ — Զանազան է սլենն. և
վասն այլոց զինուց՝ մէկ ձեռն բաւական

է, զի զթուրն և զբարարիկինն՝ ի մէկ ձեռն կարէ բանեցուցանել. բայց աղե-
զանն երկու ձեռք պիտի (Տաթէ. ձմ. ից), Այս բառը զանազան ձևով մեկնուած է։
Վաստակոց գրին մէջ Ալիշան կը հա-
մարէ «հարուածք զաւազանի և զաւազանը
կամ քուրք», Գէորգ դպիր «պարանս,
որով կապեալ զկով և զարջան տանին՝
ուր կամին» (տես Վատկ. 257), իսկ
Գարամանեան բառարանը «ոլորուածթաշ-
կինակ կամ զենջակ, որով ինչ ինչ խա-
ղերու մէջ հարուածներ կը տրուին»։ Ճիշտ
նշանակութիւնը կու տայ մեզ պըս, այնուն-
կամ բալատիցն «քիր, չօմտա՞՝ որ զլուրին
գնուակ է և փշուտ»։ ըստ այսմ լաւա-
զոյն զրչութիւնն է Տաթէացւոյն բարա-
րիկին ձկը։

Գիտնենատիլ «ոռոգուիլ»։ Արդարին սա էր
երբեմն անապատ ծարաւի, իսկ այժմ
քաղաց մեծին Աստուծոյ՝ գետհետեալ յեր-
կուց մշտարուղին աղբերաց (Էջ 27)։ —
Այլուր ունինք զետանետեալ և այս ձեռով
է նաև Ալքր. ե. 8, որմէ ընդորինակուած
է այս հասուածք ամրողչովին։

Գիիմ «հագուստ կապուստ»։ Վկայու-
թիմը տես բարկին։ — Փոխառեալ է
թբր. ըշտ ցիյու հոմանիշչն։

Գուտի «գգակ, զլիսարկ»։ Եւ կամէին
տեսանել զգեղցիկ զարպաս, նախ զզրլ-
խոյ զուտին ի վեր առնին և ապա կարեն
տեսանել զզանազան դեղոցն և զպատկե-
րագրութիւնն (Էջ 19)։ — Գլխարկը հա-
նելով շնչեցին նայելը արևելեան պատ-
կերաւոր բացարութիւն մ'է՝ շնչեցին
երկնաբերձ բարձրութիւնն ցոյց տալու
համար բառու կենդանի է մինչև հիմայ
Վանի և Մոկաց գաւառականներուն մէջ
կուտիկ ձեռով և կը նշանակէ «վարդապետի
ու բահանայի զլիսարկ՝ սկ բուրդէ հիւ-
սուած, Զ. գլուխը զնելու սաղաւարտ, զըլ-
խանոց»։

Դաման «հարկ, տուրք»։ Խնչպէս ըրահ-
մաթիլ (թբր. rahmetlu լուսահոգի) մեծ
խոսրով փաշէն զրեր է, որ 15 զառուց
շահնի զաման տամր և զոռու (ու) կէս
էլ նայիրին (արար. վայ ու ու ան-
տածած, Զ. գլուխը զնելու սաղաւարտ, զըլ-

տաւոր) տամիկ և զայլս աւելի ցաւ կամ հարկ չի լինի սուրբ տանս (էջ 49), = արար. Նաև սաման «երաշխաւորութիւն, վիասուց հատուցում»:

Դաշնատու «զաշնագիր, պայմանագիր», Այլ և մասնակիցը յայսմ պայմանիս և դաշնատափիս (տպուած կամ գրուած է դաշնատափիս, զոր պէտք է ուղղել այս ձեռվ)՝ զտէր Գրիգորն և զտէր կարապետ իոնեմ քահանայց (էջ 49):

Դեղոց «զանազան ներկերով յօրինուած պատկեր», վկայութիւնը տես դուռի:

Թրտարափ «սուսերամարտութիւն», Այս են և սուսերամերկաց հոյլը, որ կորի և թրաթափ, և երիտասարդաց և քաջ քաջաց կորի և քուշտընկերաց պատերազմունց (էջ 19):

Խորունդ «խոր, խորունկ». Եւ ասաց թափաւորն, ի ծովու խորունդ տակն ձեռցէք, զիիմ յիրար կցեցէք (էջ 16): — Այս ձեռվ և այս իմաստով գործածական է հիմայ ալ Վանի և Նոր-Բայազիտի գաւառականներուն մէջ:

Կոսանվ. Նշանակութեամբ անյայտ բառ, որ մէկ անգամ կը գտնեմ գործածուած էջ 40. Ետ զրել այսմաւուրց մի քաջ բարտուղ(ար)ին թօմայ վարդապետին՝ մականուն կոսանվ կուչեցեալ — Վանի բարբառով կայ կորձ կամ կոսան «սոսիի, ինձորի, ընկոյզի, հաւեկիթի կամ ծառի կեղեւ», որով կոսանվ կրնանց մեկնել «կեղեռվ, կճեպը չհանած»: Տես իմ Գաւառական բառարանս, ուր էջ 594 զրուած է կոսան էջ 600 կորձ. ասոնցմէ պէտք է պահէլ միայն երկրորդը. բովը նշանակելով սեելացոց կոսանչումը:

Յարանա. իմաստով ու ձեռվ անյայտ բառ. մէկ անգամ գործածուած է էջ 39. «Եւս շինեաց զանգակն մի և զուրբը Յոհաննէս և զուրբը Նիշան մի յալանա մասն շինեաց յիշատակ հոգույ իւրոյ»:

Որփիր թին. խնազարուած զրչութեամբ բառ. «Եւ զնողաթափս աշխատասէր ու տիցն սուրբ կուսին Հափիսիմեայ և զփողապահն որփիր»: Թին ներկեալ սուրբ արեամբն և զրազութիւն (էջ 31):

Անշար «տասանորդի տուրբ»: ստորագա հալալ վաստակոց իւրոց և արար ոխվ (արար. նացի) ի դուռն յԱղթամարայ սուրբ խաչին, որ է առանց գափ (արար. ձա՛վա դատ) և առանց ուշուրի (էջ 53). — փոխառեալ է արար. յա՞սիր (թրբ. օժուր) «տասանորդի տուրբ» բառէն. Կայ նաև ասոր բացասական ձեզ՝ անուշոր «տասանորդէ պատու», Եւ այլ ամենայն արտօրեաց ֆարմանով է, ևս անուշուր է (էջ 50):

Պալ «քարաժայու». Ապա ի հինգերորդ տարին լմցան զպարիսպն. անհուն բարձրութիւն նորա էր զիմաց պային, վաթսուն կանգուն (էջ 17). — Գործածական է Ապարանի, Բուլանըի, Մուշի, նորթայազէտի և Վանի գաւառականներուն մէջ:

Սալել «սալարկել, բար քաշել». Տէր Ստեփաննոսն՝ որ զսուրբ խաչի գմբեթն սալեց, ևս 13 բար ի սուրբ խաչի հարաւակողմն շինեաց (էջ 38). Տէր Ստեփաննոս՝ որ սուրբ խաչի գմբեթն սալեց, 12 բար հարաւակողմն շինեաց (էջ 60): — Գործածական է Ղազախի գաւառականին մէջ:

Սարակ «բանւոր, գործաւոր». Իսկ Գաւառչուց երկիրն՝ տուն վեցրին (իւրաքանչիւր տուն մէկ վեցրի), տուն սարակ (մի), տուն հաւ մ(ի) (էջ 56): — Գործածական է Վանի բարբառին մէջ: — Այս բառը փոխառեալ կը համարիմ սեմականէն. հմմա. արամ. Ղա՛ս սարակ «թագաւորական պաշտօնեայ»: իմաստի տարբերութեան համար հմմտ. լտ. minister.

Սպիհնոր «տեսակ մը շատախ է»: Եւ սկսան արկանել զիիմ տաճարին ի մեծամեծ քարանց ի վերայ երկուտասան սեանց. արճին ու պղինձ ու սպինտրա (ձ. սպինտրօ) հալեցին հիման մէջ (ձ. մէնջ) լցին ի հետ ըրբատին, որ պատն ուր ուր բան զպողպատ (ձ. պօղպատ)

Կուլինք ի հմէն (տպ. ի հմէմ) մինչ ի զլուխն (էջ 18): — Ֆրանս. clement բառն է լտ. clementum, որ իսուլ. յակեռ ձեռվ, մոտած է Պոլսի բարբառին մէջ և

առաւ, ցիւնեն ձևով առ զործածական է կողմանի մէջ:

Փարդակը «չէնքի մը շինութիւնը կամ հիմարկութիւնը». Յաղագս շինութիւն զերապայծա և պանծալի երկնանան և բարձրամբեթ սուրբ Խաչիս յԱղթամար բաղարի, որ նիւթ նպաստաւորութեան փարդակս բերաւ յերկրէն հեռաստանէ (էջ 21):

Քիր «կիր». Աստուած ողորմի ասացէն Նիկողայոս սրբազն կաթողիկոսին, որ զշականա վանից գօլն (լիճն) շինեաց քլով (էջ 54). — արար. շակ kils «կիր» բառն է:

Քոչշորեներ «ըմբիշ». վկայութիւնը տես բրարափ. տպագրահալին մէջ իրբն երկու բառ զրուած է քոչշա ընկերոց. պէտք է միացնել. այլուստ ծանօթ է բառս քոչշունգոր կամ քոչշաբնդիր ձևով (տես Առձ. բառ.) և է պիս. կուժից «ըմբիշ» (տես Աճառ. ՀԱ. 1908, 121):

Քանած «ծաղկահար, չէչոտ». Տէր կարապետ որ մականուամբ քոնած ասի (էջ 63). — կենդանի է վանի բարրապին մէջ:


Հ. Ապունեն

Գաղղիոյ մէջ Պօղոս Միշել անունով մէկը մետաղէ կօշիկ մը հնարած է. կը կշու զոյզը 400 կրամ. կ'արժէ կաշիէ կօշիկն տասն անգամ նուազ և կը տևէ շատ երկար. կը դիմանայ նաև ջուրի և կրակի մէջ:



Արեւմտեան Աւատրալիոյ թիրդ մայրաբաղաբէն կը հաղորդեն՝ թէ գտնուեր է 102 ցորենաշափ կը ոռով հրաշալի մարգարիտ մը, որ կ'արժէ 10էն 25,000 ստերլին. Արեւմտեան Աւատրալիոյ ծովիկերգին վրայ կը գտնուին մարգարիտի ամենանշանաւոր զործամեղաններ Ալյո Կողմերէն մարգարիտի արգամիթիւնն հասաւ:

1920-21ին 280,000 չեմբուին պակիլիւնին:



Գ. Բ. Ա. Կ. Ա. Ն.

Զ. Պ. Գ. Ա. Մ. Մ. Ս. Լ. Լ.

ԵՐԳԻԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՐԱՑ

○○○

«ԶԱԽԱԽԱԽԵՐ ՎԱՄՉՈՒՔՐ» Վ. Շ. Ե. Ա.

Ամօք մարդում. դատապարուստ կէմ անցամ կը միանայ դեմի անդակ դարձնով. Բանապահոյք առեղութաներին մարդկէ լոկ իրարու յեն միաբանիր, բնակութեա որինապարուն մորմներու յայս ունենան ծե անշուրին վող Աստուած. այս կ'արքին Առայրեամբ, բնամուրեամբ ու կուռով. Ես անդորմ գուպարմենու դայոյներով Կ'ապականն երկիրն, իրար կը մէկն. Երբ ո՞ւ բայ մ'որ սկսու ի մեզ միացներ Անրո կապերով՝ լունեար մարդ ուրիշ լաւ դշունային բամեներ, որ ի միք եր կորցւուեան կ'այլատին տիւ ու դիւեր:

ՄԻՒՏՈՒ

Պրախա Կոռուսեալ, Բ.
առզ 617-629. Թբրդ.

Հ. Ա. Ղաղիկեան, Վ. Էնասիկ 1918.

Հ. Ա. Ղ. Ա. Ա.

ԱԱԱՅԵՔ, օ՞ն, խելազար

Պարդէն եղծուած երկրի վրայ,
Տնասրան զար արեակն
ողջունելու նորածագ.

Խոպան գաշտերը պղծուած

են մարդկելին արիւնով
Եւ ջինչ երբեմ առուակերն
են արդ գետեր ժանանակու.

Թունաւորուած է ամբողջ

Երկիրն անհուն փոսերով,
Եւ ծեծուած քան միլիոն
գերիներէ խելայեն:
Ճշմարտութեան վրայ խօսիլ
յանդզոնդ մարդը մ'ը է:

Սըսախօսներն իրենց զայն

մնազանառ են ըրած.

Մինենաւորեր, գիտուններ,

մըտագարներ, դրուժաններ

24

